ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/31/2026

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 16 մարտի 2026թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Արմեն Մարուխյանի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2026 թվականի մարտի 16-ին, քննության առնելով «Ազգային համաձայնություն» կուսակցության (այսուհետ՝ Կուսակցություն) նախագահ՝ Արամ Հարությունյանի կողմից 2025 թվականի ընթացքում Կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին հաշվետվությունը օրենքով սահմանված կարգով և ժամկետում Հանձնաժողով չներկայացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 189.13-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ ՎԻՎ/31/2026 գործը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

I. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը

1.1 Հանձնաժողովը, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 23-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով սահմանված Հանձնաժողովի լիազորության շրջանակներում, «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի

(այսուհետ՝ Սահմանադրական օրենք) 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ինչպես նաև 27-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերով սահմանված պահանջների պահպանվածության ստուգման արդյունքում հայտնաբերել է, որ 2025 թվականի ընթացքում Կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին հաշվետվությունը (այսուհետ՝ Տարեկան հաշվետվություն) օրենքով սահմանված կարգով և ժամկետում Հանձնաժողով չի ներկայացվել:

1.2 Հանձնաժողովը վերը նշված տվյալի հիման վրա արձանագրել է, որ առերևույթ առկա են Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներ: 2026 թվականի մարտի 3-ին Հանձնաժողովը Կուսակցության նախագահին է ուղարկել թիվ 01/493/4-2026 գրությունը՝ հրավիրելով նշված գրությունը ստանալուց հետո՝ 3-րդ աշխատանքային օրը՝ ժամը 11:00-ին, Հանձնաժողով՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելուն, իսկ 5-րդ աշխատանքային օրը՝ ժամը 10:00-ին, գործի քննությանը մասնակցելու նպատակով:

1.3 2026 թվականի մարտի 9-ին Կուսակցության նախագահ Արամ Հարությունյանը ստացել է թիվ 01/493/4-2026 գրությունը (հիմք՝ [redacted] փոստային առաքանի):

1.4 2026 թվականի մարտի 12-ին պատշաճ ծանուցված Կուսակցության նախագահ Արամ Հարությունյանի բացակայությամբ կազմվել է թիվ 49/26 ՎԻՎ արձանագրությունը՝ Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.5 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Արամ Հարությունյանի ներկայությամբ 2026 թվականի մարտի 16-ին՝ ժամը 10:00-ին, տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում Կուսակցության նախագահ Արամ Հարությունանի կողմից դիրքորոշում է արտահայտվել առ այն, որ Կուսակցությունը չունի որևէ գույք կամ ֆինանսական շրջանառություն, սակայն Տարեկան հաշվետվություն չներկայացնելը սկզբունքային բնույթ ունի, իրեն կարող են տուգանել, ինքը

նույնիսկ աղբահանության վճար չի վճարում: Բացի այդ նշեց, որ ինքը որևէ որևէ փաստաթուղթ չի ստորագրելու, փաստաթուղթ չի ներկայացնելու (այդ թվում՝ Տարեկան հաշվետվությունը):

Հանձնաժողովի կողմից հնչեցրած հարցին ի պատասխան Արամ Հարությունյանը նաև նշեց, որ կուսակցության ղեկավար մարմնի պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագիր չի ներկայացնելու, քանի որ Հանձնաժողովն ինքն էլ կարող է ձեռք բերել պահանջվող տվյալները իր մասին, հետևաբար հայտարարագիր ներկայացնելու անհրաժեշտություն չկա, ու ինքը միայն թոշակ է ստանում:

Արամ Հարությունյանը նաև նշել է, որ լիազորում է Հանձնաժողովին իր անունից ներկայացնել «զրոյական» հաշվետվություն ու նույնիսկ պատրաստ է իր կնիքը թողնել Հանձնաժողովին, որ հաշվետվությունը իր անունից լրացնի ու ինքը որևէ թուղթ չի ստորագրի: Իսկ Հանձնաժողովի դիտարկմանն առ այն, որ Հանձնաժողովն իրավասություն չունի Կուսակցության փոխարեն Տարեկան հաշվետվություն կազմելու՝ Արամ Հարությունյանի կողմից նշվեց, որ այդ դեպքում Հանձնաժողովը կարող է իրեն տուգանել:

III. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/31/2026 վարչական վարույթում առկա նյութերը, կատարել հանգամանքների քննություն, որի արդյունքում հաստատված է համարում.

3.1 Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային շտեմարանի տվյալների համաձայն՝ Արամ Հարությունյանը 2003 թվականի նոյեմբերի 19-ից հանդիսանում է Կուսակցության գործադիր մարմնի ղեկավարը՝ տնօրենը, ինչով պայմանավորված հանդիսանում է Տարեկան հաշվետվությունը Հանձնաժողով ներկայացնելու պարտականություն կրող պաշտոնատար անձ:

3.2 Կուսակցության նախագահ Արամ Հարությունյանը 2025 թվականի ընթացքում Կուսակցության Տարեկան հաշվետվությունը օրենքով սահմանված կարգով և ժամկետում Հանձնաժողով չի ներկայացրել:

3.3 Մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության օրը Կուսակցության նախագահի կողմից Տարեկան հաշվետվությունը Հանձնաժողով չի ներկայացվել:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները

4.1 Սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Կուսակցությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնել ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին տարեկան հաշվետվությունը:

4.2 Սահմանադրական օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Կուսակցությունը պարտավոր է յուրաքանչյուր հաշվետու տարվա տարեկան հաշվետվությունը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնել մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա փետրվարի 20-ը:

4.3 Սահմանադրական օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Կուսակցության տարեկան հաշվետվությունը ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում, հրապարակվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի պաշտոնական՝ www.cpcarmenia.am կայքում՝ առանձին բաժնում տեղադրելու միջոցով:

4.4 Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է կուսակցությունների ֆինանսական գործունեությանը և կուսակցությունների տարեկան հաշվետվություններին առնչվող խախտումների վերաբերյալ գործերը:

4.5 Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.6 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 189.13-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.7 Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին հաշվետվությունը օրենքով սահմանված կարգով և ժամկետում լիազոր մարմին չներկայացնելը կամ դա օրենքով սահմանված կարգով և ժամկետում չհրապարակելը առաջացնում է տուգանքի նշանակում կուսակցության պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քառասնապատիկից մինչև հիսնապատիկի չափով:

4.8 Օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ պաշտոնատար անձինք ենթակա են վարչական պատասխանատվության այնպիսի վարչական իրավախախտումների համար, որոնք կապված են կառավարման կարգի, պետական ու հասարակական կարգի, բնության, բնակչության առողջության պահպանության ոլորտում սահմանված կանոնները և մյուս այն կանոնները չպահպանելու հետ, որոնց կատարման ապահովումը մտնում է նրանց պաշտոնեական պարտականությունների մեջ: Սույն օրենսգրքի իմաստով՝ կուսակցության պաշտոնատար անձ է համարվում կուսակցության կանոնադրության կամ այլ փաստաթղթերի հիմքով՝ սույն օրենսգրքով պատասխանատվություն առաջացնող գործողությունների (անգործության) համար պատասխանատու կուսակցության ղեկավար մարմնի անդամը կամ կուսակցության՝ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող պատասխանատու անդամը կամ աշխատողը:

4.9 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.10 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.11 Օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

4.12 Օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

4.13 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին: Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է նաև բանավոր դիտողություն հայտարարելու դեպքում:

4.14 Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2022 թվականի հուլիսի 22-ի «Կուսակցության տարեկան հաշվետվության ձևը, դրա լրացման և հրապարակման կարգը, հրապարակման ոչ ենթակա տվյալների ցանկը, ինչպես նաև տարեկան հաշվետվությունը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N 04-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) 6-րդ կետի համաձայն՝ Տարեկան հաշվետվության ներկայացման էլեկտրոնային համակարգ մուտք գործելու համար կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի ղեկավարը, իսկ կուսակցության կանոնադրությամբ կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի ղեկավարի պաշտոն նախատեսված չլինելու դեպքում՝ կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի կողմից լիազորված անձը (այսուհետ՝ լիազորված անձ) Հանձնաժողով է ներկայացնում Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 14-րդ հոդվածի իմաստով՝ կուսակցության տարեկան հաշվետվության ներկայացման համար պատասխանատու՝ կուսակցության պաշտոնատար անձի (այսուհետ՝ կուսակցության պաշտոնատար անձ) անունը, ազգանունը, հայրանունը, հանրային ծառայությունների համարանիշը (կամ հանրային

ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը), էլեկտրոնային փոստի հասցեն և հեռախոսահամարը:

4.15 Որոշման 7-րդ կետի համաձայն՝ որպես կուսակցության պաշտոնատար անձ կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի ղեկավարից բացի այլ՝ սույն հավելվածի 6-րդ կետով նախատեսված անձի տվյալներ ներկայացնելու դեպքում՝ անհրաժեշտ է կցել այն փաստաթուղթը (կուսակցության աշխատակցի դեպքում՝ աշխատանքային պայմանագիր, կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամի դեպքում՝ կուսակցության կանոնադրություն կամ մշտապես գործող ղեկավար մարմնի որոշում), որով հիմնավորվում է, որ կուսակցության տարեկան հաշվետվության՝ Հանձնաժողով ներկայացնելու պարտականությունը կրում է այդ անձը:

4.16 Որոշման 8-րդ կետի համաձայն՝ Պաշտոնատար անձ կարող է լինել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 14-րդ հոդվածով սահմանված անձը: Կուսակցության կանոնադրությամբ կամ այլ փաստաթղթով պաշտոնատար անձ սահմանված չլինելու, ինչպես նաև կուսակցության նախագահի կողմից կուսակցության պաշտոնատար անձի վերաբերյալ պահանջվող տվյալները Հանձնաժողով չներկայացնելու դեպքերում՝ կուսակցության պաշտոնատար անձ է համարվում կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի ղեկավարը (պետական լիազոր մարմնում որպես իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավար գրանցված անձը):

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դրույթը նպատակ է հետապնդում ապահովել հաշվետու տարվա ընթացքում Կուսակցության ստացած և ծախսած միջոցների թափանցիկությունն ու հանրային հաշվետվողականությունը, կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյո՞ք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Անդրադառնալով օրենսդրի կողմից նախանշված՝ կուսակցության ֆինանսական հաշվետվողականության, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեության ապահովման նպատակին՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն դեպքում հաստատված փաստ է այն, որ ինչպես օրենսդրությամբ սահմանված ժամկետներում, այնպես էլ մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ավարտը Կուսակցության կողմից Տարեկան հաշվետվությունը օրենքով սահմանված կարգով Հանձնաժողով չի ներկայացվել, ուստի՝ չի ապահովվել Կուսակցության ֆինանսական գործունեության թափանցիկության ու հաշվետվողականության օրենսդրի նպատակը:

Միաժամանակ նշվածով պայմանավորված չի ապահովվել նաև օրենսդրի կողմից նախանշված՝ Կուսակցության կողմից կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեության վերահսկողության նպատակը, քանի որ, ըստ էության, Կուսակցության կողմից Տարեկան հաշվետվությունը չներկայացնելու պայմաններում չի ապահովվում Կուսակցության ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը հաստատված է համարում այն հանգամանքը, որ առկա է Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտում:

Միաժամանակ անդրադառնալով Արամ Հարությունյանի կողմից նիստի ընթացքում ներկայացրած՝ Հանձնաժողով փաստաթուղթ չներկայացնելու սկզբունքային դիրքորոշմանը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Կուսակցության կողմից Տարեկան հաշվետվություն ներկայացնելու պարտականությունը բխում է Սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված իմպերատիվ պահանջից, այն չի նախատեսում որևէ բացառություն և Կուսակցության ղեկավար մարմնի անդամի կամահայտնությունը չունի որևէ իրավական նշանակություն այդ պարտականության կատարման անհրաժեշտության համար: Հետևաբար, Կուսակցության կողմից Տարեկան հայտարարություն չներկայացնելու հանդիսանում է Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտում՝ անկախ այդ պարտականության վերաբերյալ Արամ Հարությունյանի ունեցած սուբյեկտիվ վերաբերմունքից:

Անդրադառնալով Արամ Հարությունյանի՝ Տարեկան հայտարարագիրը Հանձնաժողովի կողմից իր անունից լրացնելու առաջարկին, Հանձնաժողովն արձանագրում է, որ Հանձնաժողովը որևէ նորմատիվ իրավական ակտով չունի նման լիազորություններ, դեռ ավելին՝ Որոշմամբ սահմանվել է այն պաշտոնատար անձանց շրջանակը, որոնք իրավասու են ներկայացնել հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին հաշվետվությունները:

Հաշվի առնելով այն հանգմանքը, որ Արամ Հարությունյանը 2003 թվականի նոյեմբերի 19-ից հանդիսանում է Կուսակցության նախագահը՝ որպես Օրենսգրքի 14-րդ հոդվածով նախատեսված կուսակցության պաշտոնատար անձ, ենթակա է պատասխանատվության Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արարքի համար:

Միաժամանակ Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործով առկա չէ Օրենսգրքի 33-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող որևէ հանգամանք, ինչպես նաև Օրենսգրքի 34-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող որևէ հանգամանք:

Ամփոփելով ամբողջ վերոնշյալը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Կուսակցության նախագահ Արամ Հարությունյանի կողմից թույլ է տրվել Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված խախտում, այն է՝ Տարեկան հաշվետվությունը օրենքով սահմանված կարգով և ժամկետում չի ներկայացրել Հանձնաժողով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, 26-րդ հոդվածով, Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Կուսակցության նախագահ Արամ Հարությունյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի քառասնապատիկի՝ ***40, 000 (քառասուն հազար) ՀՀ դրամի չափով:***

2. Տուգանքը պետք է վճարվի գանձապետական ***900005001335*** «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» ***հաշվեհամարին***՝ վճարման անդորրագրի **«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը**:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արամ Հարությունյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ